

5.3. 2007թ. հոկտեմբեր ամսվա հիդրոոդերևութաբանական վիճակը Հայաստանում

Ըստ ՀՀ բնապահպանության նախարարության տեղեկատվության, հոկտեմբերին օդի միջին ամսական ջերմաստիճանը տարածաշրջանների մեծ մասում եղել է նորմայից 2 աստիճանով բարձր:

Միջին տասնօրյակային ջերմաստիճանները երեք տասնօրյակներում էլ բարձր են եղել նորմայից 1-3 աստիճանով:

Միջին առավելագույն ջերմաստիճանն Արարատյան դաշտավայրում կազմել է $+22 +23^{\circ}\text{C}$, Սյունիքի հովիտներում՝ $+21 +23^{\circ}\text{C}$, ՀՀ Տավուշի մարզում՝ $+18 +19^{\circ}\text{C}$, ՀՀ Լոռու մարզում՝ $+16 +19^{\circ}\text{C}$, Սյունիքի նախալեռներում և լեռնային շրջաններում՝ $+15 +17^{\circ}\text{C}$:

Ամենաբարձր ջերմաստիճանը տարածաշրջանների մեծ մասում դիտվել է հոկտեմբերի 15-16-ին: Այդ օրերին առանձին տարածաշրջաններում օդի առավելագույն ջերմաստիճանները գերազանցել են տվյալ օրվա երբևէ գրանցված առավելագույն արժեքները: Սյունիքի հովիտներում գրանցվել է $+32^{\circ}\text{C}$, Արարատյան դաշտավայրում և ՀՀ Տավուշի մարզում՝ $+27 +29^{\circ}\text{C}$ (ք.Իջևանում՝ $+30^{\circ}\text{C}$), Սյունիքի նախալեռներում և ՀՀ Լոռու մարզում՝ $+22 +26^{\circ}\text{C}$, լեռնային շրջաններում՝ $+19 +21^{\circ}\text{C}$:

Միջին նվազագույն ջերմաստիճանը լեռնային շրջաններում կազմել է $+2 +6^{\circ}\text{C}$, ՀՀ Լոռու մարզում և Սյունիքի նախալեռներում՝ $+4 +7^{\circ}\text{C}$, ՀՀ Տավուշի մարզում և Արարատյան դաշտավայրում՝ $+8 +10^{\circ}\text{C}$, Սյունիքի հովիտներում՝ $+10 +13^{\circ}\text{C}$:

Ամենացածր ջերմաստիճանը տարածաշրջանների մեծ մասում դիտվել է հոկտեմբերի 18-22-ին: Լեռնային շրջաններում և ՀՀ Լոռու մարզում գրանցվել է $-2 -6^{\circ}\text{C}$, ՀՀ Տավուշի մարզում և Սյունիքի նախալեռներում՝ $-2 +3^{\circ}\text{C}$ (ք.Իջևանում՝ $+5^{\circ}\text{C}$), Արարատյան դաշտավայրում՝ $0 +2^{\circ}\text{C}$ և Սյունիքի հովիտներում՝ $+4 +7^{\circ}\text{C}$:

Հոկտեմբեր ամսվա ընթացքում տեղումների քանակը հանրապետության տարածաշրջանների մեծ մասում գերազանցել է նորման: Արարատյան դաշտավայրում այն կազմել է նորմայի 120-130%-ը, Վայոց ձորի լեռներում, ՀՀ Գեղարքունիքի, Շիրակի, Տավուշի և Լոռու մարզերում՝ 120-140%-ը (ք.Վանաձորում (ՀՀ Լոռու մարզ)՝ 57%, ք.Իջևանում՝ 90%, ք.Սևանում (ՀՀ Գեղարքունիքի մարզ)՝ 200%), ՀՀ Սյունիքի մարզում՝ 100-125% (ք.Մեղրիում՝ 60%), Արագածոտնի լեռներում և ՀՀ Կոտայքի մարզում՝ 80-85%:

Հոկտեմբերին առանձին օրեր Պուշկինի լեռնանցքում (ՀՀ Լոռու մարզ), 10-ին, 12-13-ին, 17-ին և 20-ին՝ ք.Տաշիրում (ՀՀ Լոռու մարզ), 20-ին՝ ք.Վանաձորում, 24-ին՝ Աշոցք գյուղում (ՀՀ Շիրակի մարզ), 28-ին՝ ք.Արտաշատում (ՀՀ Արարատի մարզ), 28-29-ին՝ Որոտան գյուղում (ՀՀ Սյունիքի մարզ), 30-ին՝ ք.Արարատում (ՀՀ Արարատի մարզ) դիտվել է մառախուղ, տեսանելիությունը՝ 50-500 մ: Հոկտեմբերի 13-ին ք.Տաշիրում, 14-ին՝ ք.Վանաձորում և ք.Ապարանում (ՀՀ Արագածոտնի մարզ), 15-ին՝ ք.Գավառում (ՀՀ Գեղարքունիքի մարզ), ք.Վանաձորում, ք.Կապանում (ՀՀ Սյունիքի մարզ), ք.Սևանում, ք.Իջևանում, Ֆանտան գյուղում (ՀՀ Կոտայքի մարզ) և Պուշկինի լեռնանցքում, 16-ին՝ ք.Երևանում, ք.Ստեփանավանում (ՀՀ Լոռու մարզ), ք.Ապարանում, ք.Գավառում և ք.Թալինում (ՀՀ Արագածոտնի մարզ) դիտվել է քամու ուժգնացում, արագությունը՝ 10-15 մ/վրկ, պռթկումները՝ 15-30 մ/վրկ: Հոկտեմբերի 16-ին ք.Դիլիջանում (ՀՀ Տավուշի մարզ) դիտվել է կարկուտ, տրամագիծը՝ 5 մմ:

Հոկտեմբերին հանրապետության գետերի մեծ մասում միջին ամսական ելքերը կազմել են նորմաների 80-120%-ը:

Սևանա լճի մակարդակը հոկտեմբեր ամսվա ընթացքում իջել է 4 սմ-ով և 2007թ. հոկտեմբերի 31-ի դրությամբ կազմել 1898.81 մ, որը 2006թ. նույն օրվա համեմատ բարձր է 47 սմ-ով: Ամսվա ընթացքում Սևանա լճից ջրի բացթողումը կազմել է 5.397 մլն. խոր. մ: